

կըսի.— Ե՛մ, էդա մարդ ինչ գտի իմ անուն Գաւիթ ի :
 — Մ'արդ, դիւ ըծը կ'նքն'ր, իմ անուն գտիս :
 Էդա շիւշիւտ կը թլի, յիւր ետեան¹ կը բռնի, յիւր փուղ-
 պատ կը ճղի, դեօշ կ'երիւայ,
 Երկու ծըծ կը թռնին գիւս,
 Ձեռ կը թլի գլխին, գդակ մտակ կը բերի տակ,
 Էնու նմուշ էլ կ'երիւայ :
 Գաւիթ կ'ընչի, կը տիսնայ Խանտիւթն ի, կըսի .
 — Աստուած քեօ տուն աւըրի, դիւ ընչի ըծը էդքան չար-
 չարանք տուըր :

313. Յըն տե Խանտիւթ Գաւթը կը պատմի :

— Գաւիթ, կըսի, էկաւ իմ խօր տուն, ըծը մէկ թագա-
 ւուրու տղը տարան . յեօղը մէջ ըծը դըրն, իմ մարդն էլ, էն
 էլ յէկաւ, յեօղի մէջ յերարիւ հանաք էրընք . վուր սկօն ձեռ
 թլիմ, մարդի թիւ քեշիմ վուր բիրիմ, դնիմ իմ կշտը խիտ :
 Համ մէջը կուտուաւ, համ թիւ ջարդաւ . մարդ ընկեաւ, մե-
 աւա : Էն թագեաւուր էսաց . — Վախ, էդ խարս մարդասպան ի :

Ըծը էգիւց մէկ էլ ճամբիսին : Իս էկայ իմ խօր տուն . իմ
 աղբէրքիւր իմ խիտ կուտան . «Վրէ՞ գինացիւր, թագաւուրու
 տղէն սպանիր, զձը տնէն գիւս խանին . իմ խէր ըլաւ մէկ ձի
 տուըց ձը, մէկ խորձի ուսկը տուըն ըզձը, իմ խէր էսաց . — Իմ
 աղջիկ, գինա՛ . քեօ գըլեօխ պախի, քիւ աղբէրքիւր քի կսպա-
 նին : Իսն էլ էկայ էդա դաշտը մէջ իմ տուն շնի . իս անտ²
 էրը, ըսի . «Որ կգեայ, իմ քեամակ կը դնի գետըն, իս զէն
 կառնիմ» . յէսօր դի՛ւ էկար, զձը ըռաստ էկար, քիւ խիտ
 կուտայ . որ դիւ իմ քեամակ զրկիւր գետըն, մկայ ըզձը զի՛ւր
 կը տանիս, տար . իս կգեամ քի խիտ :

314. Ըլան էկին տուն :

Էն մարդիւրու քեառտուն ձիանք էնտեղ ին :

Ինչ բան կէր Խանտիւթ խաթիւնը տուն յըմեն բառցին :

Վաթտուն ձի էլ Խանտիւթըն կէր, էնու ձիանք էլ բառցին :
 Խարիւր ձին էլ բառցին, էկան դախ Աստուն :

թ .

Բապը Փրէնկի :

315. Գաւթը անուն շատ ջուջացաւ, ուր տնէն ըլաւ մէկ
 պատիկ թագաւուր :

1 Թրք.—Օմիր : 2 Թրք.—Ալխա, մտադրութիւն :